

1927
= 142 =

1927

№ 3 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԳՅՈՒՂԻ ՀԱՐՈՒՍՏՆԵՐՆ
ՈՒ ՉՔԱՎՈՐՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ — 1926

339 JUL 2017

№ 3 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԳՅՈՒՂԻ ՀԱՐՈՒՍՏՆԵՐՆ
ՈՒ ՉՔԱՎՈՐՆԵՐԸ



ԶԲԱՎՈՐԸ, ՄԻՋԱԿԸ ՅԵՎ ԿՈՒԼԱԿԸ

Նորհրդային իշխանութիւն մի գեղրեա (որենք), մի վորոշում չկա, վոր խիստ տարբերութիւն չդնի գլուղական ալա չերեք գլխավոր խմբերի միջև: Առաջին խումբը չքաւորներն են (պրոլետարներն ու կիսապրոլետարները, ինչպէս սովորաբար անվանում են նրանց անտեսական գիտութիւն մեջ): Այգլիսիները շատ-շատ են: Կալվաժատերերի և կապիտալիստների իշխանութիւն որով ճնշումն ամենից շատ բնկնում եր չքաւորութիւն վրա: Աշխարհիս բոլոր վայրերում իսկական սոցիալիստական շարժման ամենամուր նեցուկը հանդիսանում են բանվորներն ու նրանց աշակցող գլուղական չքաւորութիւնը: Յերկրորդ խումբը կուլակներն են, ալաինքն հարուստ գլուղացիները, վորոնք շահագործում են ուրիշի աշխատանքը կամ աշխատավոր վարձելով, կամ փող շահով տալով կամ դրա նման մի բան: Այս խումբը Նորհրդային իշխանութիւն թշնամիների՝ կալվաժատերերի ու կապիտալիստների կողմն ե պահում: Յերրորդ խումբը՝ միջակ գլուղացիներն են: Սրանք Նորհրդային իշխանութիւն թշնամիները չեն: Նրանք կարող են լինել նրա բարեկամը. մենք ձգտում ենք դրան և կհասնենք դրան: Սոցիալիզմի բոլոր ուսուցիչները միշտ ել քարոզել են, թե բանվորները պետք ե տապալեն կալվաժատերերին և կապիտալիստներին, վորպէսզի հաստատեն սոցիալիզմը. իսկ միջակ գլուղացիների հետ հնարավոր ե և անհրաժեշտ ե համաձայնութիւն գալ:

Կալվաժատերերի և կապիտալիստների տիրապետութիւն որով միջակ գլուղացիներից շատ քչերը, թերեւ հարչուրից միայն մեկը, կարողանում ելին հաստատուն բարեկեցիկ գլուղական հասնել, ալն ել հասնում են դրան կուլակ գաւոնալով, չքաւոր-



№ 460

Դրանկար № 863 (բ)

Տիրած 3000

Պետրոսի առաջին տպարան Վաղարշապատում



11-243949p

բության վզին նստելով: Իսկ միջակ գլուղացիներն խոշոր մեծամասնութունը, կալվածատերերն և կապիտալիստներն իշխանության որով, անխուսափելիորեն կարիքն մեջ պետք է լինի և չենթարկվի հարուստների հեգնանքին:

Կապիտալիստական բոլոր չեղկոններում ել իրերի գրութունն աչպես և:

Սոցիալիզմի որով հնարավոր է լիակատար և հաստատուն բարեկեցիկ գրութուն և բոլոր բանվորների, և անխափր բոլոր չքավոր գլուղացիների համար, առանց ուրիշի աշխատանքը թալանելու: Յերբեք վոչ մի բալլճեիկ, վոչ մի կոմունիստ, վոչ մի ինքըր զլխին սոցիալիստ մտքովն անգամ չի անցկացրել բունութուն գործադրելու միջակ գլուղացու դեմ: Բոլոր սոցիալիստները միշտ ել խոսել են նրանց հետ համաձայնության գալու, նրանց աստիճանաբար կամովին գեպի սոցիալիզմը քաշելու մասին:

ԸՍՏ ԼԵՆԻՆ:

Պատասխան գլուղացու հարցմունքին:

ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Այն ամենագլխավոր հարցը, վոր աչժմ դրված է կոմունիստական կուսակցության առաջ, միջակ գլուղացիության հարցն է:

Առաջին հարցը, վոր սովորաբար տալիս են, այն է, թե ինչ բան է միջակ գլուղացին:

Բնական է, վոր գլուղում, ինչպես կուսակցական ընկերները քանիցս պատմել են, հարցնում են, թե ինչ բան է միջակ գլուղացին:

Յեվ գրան մենք պատասխանում ելինք. «Այդ այն գլուղացին և, վոր չի շահագործում ուրիշին, չի ապրում ուրիշի աշխատանքով չի ոգտվում վորեմե մասով, վորեմե ձեզով ուրիշի արդյունքից, այլ ինքն և աշխատում, ապրում և իր սեփական աշխատանքով»:

Կապիտալիզմի որով աչգալիսի գլուղացիներ ալելի քիչ ելին, բան աչժմ, վորովհետև մեծամասնութունը պատկանում եր խիստ կարիքավորների խմբին, և միայն չնչին մասն եր, վոր թե այն

ժամանակ և թե աչժմ պատկանում եր կուլակներին, շահագործողներին, հարուստ գլուղացիներին շարքին:

Միջակ գլուղացիներն սկսում են շատանալ այն որից, չերբ վերացվում է հողի մասնավոր սեփականութունը: Յեվ ահա խորհրդային իշխանութունը հաստատ վորոշել է միջակ գլուղացիության հետ սահմանել միանգամայն խաղաղ և համերաշխ հարաբերութուններ: Իհարկե, միջակ գլուղացին չի կարող միանգամից սոցիալիզմի կողմն անցնել. նա պինդ կառչած է իր սովորութուններին, գլուղությամբ և մոտենում ամեն մի նորության, նախ գործի մեջ, պրակտիկայում և փորձում ամեն մի առաջարկ, իր կյանքի մեջ փոփոխութուն չի մտցնում, մինչև չի համոզվում, վոր դա անհրաժեշտ է:

Հենց դրա համար ել մենք պետք է գիտենանք, հիշենք և իրագործենք, վոր կոմունիստ բանվորները, գլուղ մտնելով, պարտավոր են ընկերական վերաբերմունքով մոտենալ միջակ գլուղացիությանը, պարտավոր են ընկերական հարաբերութուններ սահմանել նրանց հետ, պարտավոր են հիշելու, վոր ուրիշի աշխատանքը չշահագործող աշխատավորը բանվորի ընկերն է, և հնարավոր է ու պետք է նրա հետ կապել լիակատար անկեղծության և հավատի վրա հենված մի կամավոր դաշինք: Կոմունիստական իշխանության առաջադրած ամեն մի միջոցին պետք է նայել այն ձևով, վոր գրանք լոկ խորհուրդ են, ցուցմունք միջակ գլուղացիությանը, նոր կարգերին անցնելու անհրաժեշտության մի հորդոր:

Յեվ միայն միահամուռ աշխատակցությամբ, գործնականում փորձելով աչ միջոցները, ստուգելով նրա սխալները, վերացնելով հնարավոր սխալները կարելի չե համաձայնության գալ միջակ գլուղացիության հետ: Միայն աչգալիսի աշխատանքով է ապահովվելու բանվորների և գլուղացիների միութունը. աչ միության մեջ է խորհրդային իշխանության գլխավոր ուժն ու նեցուկը: Այդ միության մեջ է գրավականը այն բանի, վոր սոցիալիստական վերակազմության գործը, ամեն կարգի շահագործման վերացման գործը մենք կհասցենք իր հաղթական վախճանին:

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՃԱՌԻՅ (Միջակ գլուղացիների մասին):

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

Գյուղը միատարր չէ, ինչպես միատարր չեն և քաղաքը: Գյուղը շերտավորված է, նա շերտավորվում է և հիմա. և քանի գնա, այդ շերտավորումն ավելի ցայտուն կլինի:

Միջանի տարի սրանից առաջ Հայաստանում ել, ինչպես և Ռուսաստանում, չէր նկատվում այդ շերտավորումը, չէինք կարող տեսնել այն, ինչ տեսնում ենք մենք այսօր:

Ռազմական կոմսունիզմի շրջանից մենք անցանք նոր տրեստեական քաղաքականության, մենք գյուղացիների հետ կապը պահպանելու համար ազատություն տվինք շուկային: Սկսվեցին և զարգանում են ապրանքային տնտեսություն, փողային տնտեսություն ձևերը:

Իսկ փորձեղ գյուղություն ունի ապրանքային տնտեսությունը, այնտեղ ել գյուղություն ունեն կապիտալիստական հասարակական կարգին հատուկ հակասությունները, գյուղություն ունի շահագործումն, մրցումն: Հարստանում են քչերը, իսկ մեծամասնությունը ընկնում է աղքատության գիրկը:

Հայաստանը ավելի քան փողային տնտեսություն ունի, փորձենալ գաշտային շրջանում գյուղացին արտադրում է բամբակ, խաղող. լեռնային շրջանում նա մեծ մասամբ պարսպում է անտանապահությանը և իր պահանջներին բավարարություն տալու համար ստացած մթերքները պետք է հանի շուկա ծախելու: Սրա համար ել Հայաստանի գյուղը (մանավանդ Յերևանի և Եջմիածնի գավառների գաշտային շրջանները) ավելի մեծ չափերով չենթարկվում և շերտավորման, քան այլ տեղ, փորձեղ գյուղացին այդքան մեծ չափով չի կապված շուկայի հետ:

Հիմա ամեն մի կոմսոմոլիստ, ամեն մի պիոներ լավ պետք է իմանա, փոր մեր գյուղը շերտավորված է, և քանի գնում, մեծ չափեր և ստանում այդ շերտավորումը:

Շուկայի ստեղծած հարաբերություններն ստեղծում են և կուլակին. չի կարող պատահել այլ կերպ: Հայաստանում ել գյուղություն ունեն այդ շուկայի հարաբերությունները, Հայաստանում ել կա կուլակ: Մենք բոլորս կամ կապ ունենք գյուղի հետ, կամ աշխատել կամ շփվել ենք մեր գյուղի հետ, մենք

հենց մեր գիտագոյությունը մեր ամեն մի քայլափոխում տեսնում ենք, փոր մեզ մոտ կան և՛ կուլակներ, և՛ միջակներ, և՛ չքավորներ, բառարակներ:

Դժբախտաբար թվական ավյալներ չունենք հաստատ ասելու, թե գյուղում այս կամ այն տարրը փոր տոկոսն է կազմում, բայց միջանի գյուղի փորձ ունենալով, կարելի չէ ասել, փոր կուլակները շատ քիչ տոկոսն են կազմում, փոչ ավել 5-7% -ից, մնացած հոծ մեծամասնությունը միջակներն են, չքավորներն ու բառարակները:

Տարբեր է գյուղի այս տարրերի տնտեսական դրությունը, տարբեր է սրանց վերաբերմունքը դեպի խորհրդային իշխանությունը, տարբեր է և խորհրդային իշխանություն վերաբերմունքը դեպի այս տարրերը:

Կուլակների դեմ մենք միշտ կռվել ենք, կռվում ենք հիմա, կկռվենք և վաղը, մինչև կհաղթենք: Չքավորներն ու բառարակները մեր դաշնակիցներն են: Միջակ գյուղացիներին պետք է կապել մեզ հետ, միջակ գյուղացիների վերաբերմամբ մեր քաղաքականությունը պետք է ճիշտ ըմբռնի ամեն մի աշխատող, փորպեսզի այն հարվածները, փոր Կոմկուսակցությունը պատրաստում է կուլակների համար, չընկնի միջակների գլխին: Հաճախ միջակին դատում են կուլակի շարքը և գժգոհություն առաջ բերում այն տարրի մեջ, փորը պետք է լինի խորհրդային, փորին հարկավոր է ամուր կապել բանվոր դասակարգի հետ:

ԿՈՒԼԱԿԸ

Միջակին կուլակի հետ չխառնելու համար պետք է լավ ճանաչենք կուլակին: Ո՞վ է կուլակը, ո՞ւմ ենք ասում կուլակ:

Շատերը կարծում են, իհարկե՝ սխալ, իհարկե՝ վոչ-մարքսիստորեն, փոր մի ընդհանուր զեղառոմ կարելի չէ տալ Հայաստանի կամ Անդրկովկասի ընկերներին կուլակներին փորոշելու համար: Թե ով չերկու ձի ունի և 2 լեզ, նա կուլակ է, եսքան կով, եսքան փոխար ունեցողը կուլակ է: Չի կարելի այս ձևով կուլակին հայտնաբերել: Կարող է պատահել մի գյու-

գում 2 ձի և 2 լեզ ունեցողը լինի կուլակ, մի այլ տեղ նույն-
քան անասուն ունեցողը՝ միջակ: Կլինի աչնալիսի վալը, վորտեղ
2 լեզ և 3 կով ունեցողը լինի կուլակ, իսկ մի այլ տեղում 4
լեզ և 4 կով ունեցողը լինի միջակ: Մի գյուղում գուլթան ու-
նեցողը կարող է կուլակ լինել, մի ուրիշ գյուղում՝ միջակ: Գրյ-
խավորն աչն չի, թե տվյալ գյուղացին ինչքան անասուններ
ունի, հող ունի և այլն, այլ զլխավորն աչն է, թե ինչպիսի փոխ-
հարաբերության — հասարակական-անտեսական փոխհարաբերու-
թյան մեջ է տվյալ գյուղացին մյուս գյուղացիների հետ: Շա-
հագործում է արդյոք տվյալ գյուղացին մյուս գյուղացիներին,
ներանց աշխատանքի արգելանքով և զիգում իր հարստությունը
թե վոչ: Յեթե մի գյուղացի իր և իր ընտանիքի անդամների
աշխատանքով է ձեռք բերում իր լեզները, նա չի շահագոր-
ծում մյուս գյուղացիներին — նրան կուլակ անվանել չի կարելի:

Կուլակ է նա, վորի տնտեսության շափը վեր է նրա ըն-
տանիքի աշխատող անդամների ուժերից, յեւ վորը շահագործում
է այլ գյուղացիներին՝ այդ տնտեսությանը պահելու ու զարգա-
ցնելու համար:

Ի՞նչ ձևով է շահագործում կուլակը, վորտեղից է առաջ
գալիս կուլակը:

Հեղափոխությունից առաջ, լերը հողը կարելի չէր գնել, կա-
րելի չէր ծախել, կուլակը գնում էր հողը, լավ հողերը դար-
ձնում էր իր սեփականությունը ու ալոպես իր տնտեսությունը
մեծացնում: Հիմա հողը վոչ ծախել կարելի չէ և վոչ էլ գնել,
Խորհրդային իշխանությունը արգելել է հողի առևտուրը: Այս-
տեղ կուլակն ալոպ փոշինչ անել չի կարող: Բայց հողագործու-
թյան հետ կապված գործիքների առևտուրը չի արգելված, գու-
լթանների ընդհանուրի սեփականություն չի հայտարարված, աշ-
խատող կենդանիների աղգաչնացում չի կատարված: Բոլոր գյու-
ղացիներն էլ գուլթան չունեն, լեզ չունեն: Հայաստանի 144
հազար տնտեսությունից միայն 8 հազարն ունի գուլթաններ, և
տնտեսությունների $\frac{1}{4}$ -ը՝ աշխատող անասուններ: Իսկ մնացած
տնտեսություններին էլ հարկավոր է հողը մշակել, այս գյուղա-
ցիներին էլ և հարկավոր ապրել: Յեւ ալոպեղ հանդես է գալիս

կուլակը, վորն ունի և՛ գործիքներ, և՛ աշխատող անասուններ:
Ու վորքան նա քիչ մրցակիցներ ունի գյուղում, աչնքան իրեն
ձեռնառու պայմաններով է նա վերցնում հողը «կիսովի» ցանե-
լու, վերցնում հողը արենդով չքավոր գյուղացիներից: Տեղ-տեղ
բերքի 75% -ը կուլակը վերցնում է իրեն միմիայն նրա համար,
վոր նա վարում է հողը ու կալն է անում: Կուլակը շահագոր-
ծում է գյուղացուն, վորովհետև և՛ գործիքի, և՛ աշխատող կեն-
դանու տերն ինքն է: Պատահում է նաև, վոր կուլակն իր գոր-
ծիքը կամ անասունը վարձով է տալիս չունեղ գյուղացուն
աչնալիսի պայմանով, վոր չքավոր գյուղացին զլուին է կոր-
ցրնում, իր $\frac{1}{2}$ դեխիառին արտը վարելու համար 10—20 որ պետք
է աշխատի կուլակի համար:

Աչնալիսով կուլակի հատկությունից մեկը գործիք է անա-
սուն ունենալն է, վորոնց միջոցով նա կարողանում է շահա-
գործել գյուղացիներին:

Այստեղից ստացած իր ոգուտը կուլակը մասամբ գործա-
դրում է գյուղացիներին պարտք տալով, վորից նա շատ ոգուտ է
ստանում: Գարնանը մանավանդ չքավորը, մասամբ էլ միջակը
դժվար դրության մեջ են ընկնում, վերջանում է նրանց պա-
շարը, հացահատիկ ալոպ չունեն, մինչև կալն էլ գեռ միքանի
տալիս կա: Դժվար դրությունից դուրս գալու համար նրանք վա-
ղում են հացահատիկ ունեցողի մոտ, նրանք գալիս են կուլակի
մոտ և տսում, թե՛ «մեզ միքիչ հաց տուր»: Կուլակն էլ տա-
լիս է — պայմանով, վոր կալին չեռ պետք է ստանա 1 փլին $\frac{1}{2}$
փութ ավել, փլին մի փութ ավել: Կուլակը պարտք է տալիս
միքանի հարյուր տոկոսով:

Այստեղ կուլակը հանդես է գալիս իր վաշխատուական դեմ-
քով:

Այս «աշխատանքով» նա չի բավականանում. գյուղում գեռ
շատ ասպարեզներ կան, վորտեղ կուլակը ցուլց է տալիս իր
հունարները:

Առևտրական ասպարեզն էլ է տված նրան. բայց է անում խա-
նութ, բամբակ և հավաքում, խաղող և հավաքում, չիթ և ծա-

խում, միա և մորթել տալիս, խոտի, դարմանի առևտուր և ա-
նում. աչսպիտով նա կարողանում և առևտրական ասպարեզն ել
իր ձեռքը ձգել:

Մաչել կուլակի յերրորդ հատկանշական կողմն և, առեւտուրն
եւ կուլակի հարստանալու, կուլակ գառնալու միջոցներից մեկն և:

Մի ասպարեզ ել, և մենք պատկերացում կկազմենք կուլակի
մասին—գլուղի ձեռնարկությունները—արհեստանոցները. սրանք
եւ են բացում կուլակի ախորժակը. նա լել ջրագաց և պահում,
ձիթահանք ունի, սպիրտի գործարան, կամ քուրք կարողներին
և իր ձեռքը վերցնում, կամ դարբիններին, կամ սման շինողնե-
րին, կամ խալիչա (գորգ) գործողներին:

Ահա այն չորս գլխավոր ասպարեզները, վորտեղ ծնվում ու
անվում և կուլակը:

Այս աշխատանքները կուլակը ինքն իր բնատանիքի անդամ-
ների հետ չի կարող տանել, վեր և աչդ նրանց ուժերից, սրա
համար ել նա վարձում և բատրակներ, վարձում և բանվորներ,
վարձում և ջրագացականն ու շահագործելով սրանց աշխա-
տանքը, կարողանում և շարունակել իր «գործը»:

Տիպիկ կուլակը գործում և այս չորս ասպարեզներում ել,
բաց կան և կուլակներ, վորոնք գործում են 2—3 ասպարե-
զում միայն:

Աչսպիտի անտեսական հարաբերություններ ունենալով գլու-
ղի չքավոր և մասամբ միջակ տարրերի հետ, կուլակը քաղաքա-
կանապես իրեն հետ և կապում աչդ տարրերին, իր ազդեցու-
թյան տակ և գցում չքավորներին ու միջակներին, ուզում և իր ազ-
դեցության տակ գցի և՛ գլուղխորհուրդը, և՛ փոխոգկոմը, և՛ հոդ-
կոմը, և գլուղում աշխատող մյուս կազմակերպությունները, մին-
չև իսկ գլուղկոմը շիջը, կոմկերիտմիության բշիջը, և չի կարելի
ասել, թե շատ տեղերում հաջողություն չի ունենում:

Տեսեսապես կուլակը չի կարող գոյութուն ունենալ առանց
շահագործելու. քաղաքականապես նա տանել չի կարող, չերը իրեն
թույլ չեն տալիս շահագործելու: Դրա համար ել նա գեմ և
Խորհրդային իշխանության, դրա համար ել նա ուղի-շուղի,
պետք և թշնամի լինի խորհրդային կարգերին:

ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Վերը տեսանք, վոր միջակ գլուղացիներին շատ ժամանակ
խառնում են կուլակների հետ, և այն հարվածները, վոր պետք
և իջեցնենք կուլակների գլխին, սխալմամբ իջեցնում են մի-
ջակների գլխին: Դրանով մենք կարում ենք այն ճշուգր, վորի
վրա հասել ենք, գրանով մենք գրողում ենք մեր գեմ միջակ-
ներին: Վոչ մի տեղ, վոչ մի մարքսիստ չի ասել, վոր պրոլե-
տարական գիկտատուրայի ժամանակ պետք և բռնի միջոցներ
գործադրել մանր անտեսությունների նկատմամբ—միջակ և
չքավոր գլուղացիների նկատմամբ:

Նույնիսկ հին կապիտալիստական լերկներում պրոլետա-
րիատի հաղթանակներից մի շարք տարիներ ել հետո չենք գիպ-
չելու միջակ անտեսության: Մեր աշխատող ընկերներն աչդ
լավ պետք և իմանան, մեր աշխատողները պետք և լինեն մի-
ջակների ընկերը՝ վոչ հրամայողի գերում. միջակը կերթա գե-
պի սոցիալիզմ վոչ բռնի միջոցներով, աչդ որինակով, սովորեցնե-
լով, հասկացնելով, Խորհրդային իշխանության ամեն մի առա-
վելությունը գործով նրան ցույց տալով: Այս տեսակետից խո-
շոր և շատ խոշոր սխալ կլինի, լեթե մենք վորեւ ձևով գիպ-
չենք միջակին, վորեւ ձևով գրողենք նրան մեր գեմ:

Մեր գլուղում միջակների թիվը շատ-շատ և, վոչ պակաս,
լերեի, գլուղացիության կեսից: Այս տարրը մեզ հետ չկապել՝
կնշանակի վոչինչ չհասկանալ հեղափոխության դասերից:

Միջակը չի շահագործում մյուս գլուղացիներին, նա իր և
իր բնատանիքի անդամների աշխատանքով մի կերպ կարողանում
և իր ինքնուրույն անտեսությունն ունենալ, իր անտեսությունը
պահել: Գլուղատեսական գործիքներ և աշխատավոր անա-
սուններ ևս այնքան ունի, վոր հագլով կարողանում և յուս
գնալ: Միջակը առևտրով չի զբաղվում: Շատ քիչ գեպքերում
և նա գլմում բատրակի կամ վարձու բանվորի ողնության. բն-
տանիքի անդամների հիվանդության, վոչ չափահասության, սե-
զոնալին աշխատանքների պատճառով և պատահում, վոր միջա-
կը ժամանակավորապես բանվոր և վարձում: Բացդ դա կրում
և ժամանակավոր բնույթ:

Միջակները անտեսական գրութեամբ շատ տատանվող են, նրանք ձգտում են կուլակ լինելու, նրանք աշխատում են հարստանալ. գրանցից շատ քիչ բախտավորների չեն հաջողվում ընկնել կուլակների շարքը. մեծ մասամբ հետզհետե նրանք ընկնում են աղքատների գիրքը:

Միջակի անտեսութեանն ավելի քիչ ապրանքային անտեսութեան բնույթ է կրում. նա հազիվ է կարողանում իր գրութեունը պահպանել: Անհաջող տարիներ են, կարկտի, լերաշաղի ժամանակ նա ընկնում է կուլակի չեռերից, նրանից պարտք է ուզում, ընկնում է կուլակի ազդեցութեան տակ:

Մեր աշխատանքը հարկավոր է տանել այնպես, վոր ոգնենք բարձրացնելու միջակի անտեսութեունը, ոգնենք վատ տարիներին նրան, լինենք նրա բարեկամը, վոր նա չեղ ճանաչի մեզ իբրեւ իրեն բարի կամեցող բարեկամի:

Միջակը չի շահագործում. նա խորհրդային իշխանութեան թշնամին լինել չի կարող. մեր վերաբերմունքից է կախված միջակին խորհրդային իշխանութեան կողմնակիցը դարձնելը — միջակին մերը դարձնելը: Սրանից է կախված և վորոշ չափով բանվորա-գյուղացիական հեղափոխութեան բախտը:

ԶԲԱՎՈՐԸ ՅԵՎ ԲԱՏՐԱԿԸ

Սրանք են մեր դաշնակիցները. դա չի նշանակում, վոր գյուղխորհուրդներում, գյուղըջիջներում և գյուղի կազմակերպութեւնները պետք է լցնենք այս տարրերով միայն: Յերբեք չպետք է մոռանալ միջակներին. մեծ սխալ կլինի, չեթե մոռանանք միջակներին:

Գյուղի չքավորը շահագործվում է, նա ինվենտար չունի, լծկաններ չունի, հողը տալիս է կիսովի, կուլակի մոտ վարձվում է զանազան աշխատանքներ կատարելու համար, բանվոր է տալիս քաղաքներին, բանող է տալիս ճանապարհների վրա: Մի խոսքով՝ չքավորներն են, վոր շահագործվում են կուլակների կողմից:

Չքավորների միջից է դուրս գալիս և բատրակը, կուլակի մոտ աշխատողը: Բատրակը, բացի հողից, փոխնչ չունի, տեղ-տեղ նա հող էլ չունի, իր ընտանիքն ապրում է մեծ մասամբ

բատրակի աշխատանքով: Գյուղի չքավորների այն մասը, վոր իր ապրուստի միջոցների կեսից ավելին ուրիշներին մոտ աշխատելով և ծնոք բերում — նրան էլ մենք անվանում ենք բատրակ:

Այս տարրերը շահագործվում են, սրանք խորհրդային իշխանութեան բարեկամներն են, մանավանդ այն ժամանակ, չերբ կազմակերպված են, չերբ հասկանում են իրենց գրութեւնը: Այս տարրերին էլ խոշոր չափով պետք է ոգնել, սրանք էլ պետք է կազմակերպվեն. պետք է կազմակերպվեն, վոր գյուղում խորհրդային իշխանութեան ամենալավ պաշտպանները դառնան:

Միջակների, չքավորների և բատրակների խորհրդային իշխանութեան շուրջ համախմբվելը — ամենալավ հենարանը կլինի խորհրդային իշխանութեան համար գյուղում:

ԻՆՁՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿՈՎԵԼ ԿՈՒԼԱԿԻ ԴԵՄ

Գրավել, պետականացնել, ազգայնացնել, խել անատունները և տալ չքավորներին — այսպես ելինք մենք կոչում ուղմական կոմիտեից մի շարքում. այն ժամանակ այդպես էլ պետք էր: Հիմա ժամանակները փոխվել են, հիմա նոր անտեսական բաղադրականութեան շրջանն ենք ապրում, ալդ միջոցներով չի կարելի կովել, հիմա կոոպերացիայի միջոցով պետք է կովել: Հիմա չեղ կոխվը կա, բացց ալդ միջոցներով:

Կազմակերպվող կուլակութեանը մենք հակադրելու չենք կազմակերպվող չքավորներին ու միջակներին, իր շահերը գիտակցող կուլակին՝ իր շահերը, ոգուտը գիտակցող միջակին ու չքավորին: Ուժեղացնելու չենք մեր խորհուրդները, նրանց աշխատանքի չենք կանչելու, ուժեղացնելու չենք բլիջների աշխատանքները, մեծ թափով տանելու չենք լուսավորութեան աշխատանքները:

Կուլակն ինվենտարի ու աշխատավոր չեզների ուժով է հարստանում — հարկավոր է չքավորներին, միջակներին կազմակերպել արտեյների մեջ, ընկերութեւններ հիմնել, վորոնց պետութեւնը հնարավորութեւն կունենա ոգնութեան գալու, վորոնք կամաց-կամաց իրենց ուժերով կկտրեն կուլակի հետ ունեցած կապը: Կուլակը վարկ է տալիս վաշխատուական տոկոս-

ներով—հարկավոր և ուժեղացնել մեր վարկային ընկերությունները, հարկավոր և միջակ գյուղացիներին ձեռք-ձեռքի տված չքավորների հետ կազմակերպել փոխադարձ ոգնություն ընկերությունների շուրջը: Վարկային ընկերությունը շատ ավելի քիչ—հնչին տոկոսով վարկ կտա գյուղացուն ու կիլի նրան կուլակի ճանկերից:

Կուլակին առևտուր և անում. մեզ հարկավոր և համախորհրդվել մեր սպառողական կոոպերատիվի շուրջը, գնել նրա աշխատանքը կանոնավոր, պակասեցնել սպրանքների գները, ու կուլակին դուրս կանենք այս ասպարեզից ել:

Կուլակը ջրադադիր, ձիթահանքի տեր և, նա գյուղի ձեռնարկներից և ոգավում. կազմակերպենք ընկերություններ, վերցնենք ջրադադիր մեր ձեռքը, վերցնենք ձիթահանքը մեր ձեռքը, ու այս գիրքից ել կհանենք կուլակին:

Շատ և շահագործում կուլակը—լավ հետևենք, փոր մեր հողային սրենքները, մեր աշխատանքի սրենքներն իրադրծվեն կանքում. աչգ սրենքները շատ են սահմանափակում կուլակին:

Շատ և հարստանում կուլակը մեր հարկային քաղաքականությունը. նրանից շատ հարկեր վերցնելով սահման գները նրա ախորժակին:

Կուլակը ձգտում և խորհուրդն իր ազդեցության տակ ձգել. բնադենք խորհրդի անդամ չքավոր ու միջակ գյուղացուն, փորը հասկանում և չքավորին, միջակին, պաշտպանում և նրանց շահերը և չի բնկնում կուլակների ազդեցության տակ: Բարձրացնենք գյուղը՝ շիջի, կոմսոմոլի բժիշկի հեղինակությունը, ոգնենք գյուղացուն իր անտեսությունը բարձրացնելու: Վերացնենք մեր աշխատանքի թերությունները, ուղղենք մեր սխալները և, փոր գլխավորն և, հիամարձակվենք գյուղացուն հրամայելու, այլ լինենք նրա բնկը:

Այս և մեր կովի ճանապարհը կուլակների դեմ, այս և այն ուղին, փոր տանում և մեզ հարկային կոմսոմոլի լուսավոր սպառան:

Ս. ՇԱՀԳՅԱՆԻՑՍԻ

Մեր գյուղը՝ բրոշուրից



ՀԱՐՑԵՐ

Ներկայումս գյուղում շերտավորում կա, և ինչի հետևանք և այդ: Ի՞նչ և կուլակը:

Վերոնք են նրա հատկանիշները:

Լենինի կարծիքը կուլակի մասին:

Ի՞նչպես և վերաբերվում կուլակը խորհրդային իշխանությունը, և խորհրդային իշխանությունը կուլակին:

Կա՞ն ձեր գյուղում կուլակներ, քանի՞ տոկոս են կազմում, և ի՞նչ ասպարեզներում և արտահայտվում նրանց գործունեությունը:

Ո՞ւմ ենք ասում միջակ գյուղացի:

Ի՞նչն և կազմում միջակ գյուղացու իսկական հատկանիշը ըստ Լենինի:

Ի՞նչ վիճակի մեջ և միջակ գյուղացին կապիտալիստական հասարակություն մեջ:

Ի՞նչպես և վերաբերվում միջակ գյուղացիությունը խորհրդ. իշխանությունը:

Ի՞նչ և չքավորը և բատրակը:

Ի՞նչ թիվ են կազմում միջակները, չքավորներն ու բատրակները ձեր գյուղում:

Ձեր շրջանի գյուղխորհրդի վրձ տոկոսն և միջակ գյուղացի, չքավոր և բատրակ:

Կա՞ն բատրակային կազմակերպություններ ձեր շրջանում:

Ի՞նչպես և վերաբերվում խորհրդային իշխանությունը չքավորին ու բատրակին:

Խորհրդային իշխանությունը ի՞նչպես եր կովում կուլակների դեմ ուղղված կոմսոմոլի ժամանակ և ի՞նչպես ներկայումս, տեղական հոր քաղաքականությունը շրջանում:

Ց Ա Ն Կ

1. Չքավորը, միջակը և կուլակը	• • •	Լենինից *	3
2. Միջակ գյուղացին	• • •	» *	4
3. Գյուղի շերտավորումը	• • •	Ա. Շահգյուլդյան	5
4. Կուլակը	• • •	»	7
5. Միջակ գյուղացին	• • •	»	11
6. Չքավորը և բարակը	• • •	»	12
7. Ինչպես պետք է կռիվել կուլակի դեմ	• • •	»	13
8. Հարցեր	• • •	• • •	15

Կազմեց Ան. Ստամբուլյան

* Ոգտված է «Поденная лаборатория по обществоведению», отд. 1-ый, вып. 24-

ՀՀ Ազգային գրադարան



NL0766500

11

24394



ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

1-3,